եղեւ թէ որպէ՞ս կատարէին Հայք զպաշտամունս իւրեանց
յայրի անդ, եւ թէ՝ որպէ՞ս խորտակեցին Լատինք զդա-
րանն եւ զարկղն, այլովքն հանդերձ, եւ թէ զիա՞րդ
հրամայէր Արքայ 'ի հրովարտակին՝ ըստ վճռոյ մեծի դեն-
պետին դնել եւ զետեղել զիւրաքանչիւր կահս 'ի տեղի
իւրում. և ըստ սովորութեան կատարել զպաշտամունս:
Յետ ընթեռնլոյ զայս ամենայն յատենի անդ, պատուէր
ետ դատաւորն Լատինաց և Յունաց չընդդիմանալ Հայոց
վասն Պատարագի և այլոց իրաց. եւ ետ կախել անդրէն
զերկուս կանթեղս 'ի տեղւոջ իւրում, առաջի Յոյն եւ
Լատին փոխանորդաց. 'ի ١ Սէփէր ամսոյ, ١٠٥٥ (1645):

Ահա այսպէս Գրիգոր Պատրիարք Պարոն Տէր կոչեցեալ,
զորոյ զպատմութիւնն փոքր 'ի շատէ գրեցաք, տառա-
պեալ 'ի հոգետանջ դատաստանական խնդիրս և 'ի բազ-
մայոյզ մեծս ընդ օտարազգիս, սիրով դեգերեալ 'ի դը-
րունս այլազգեաց և այլոց. վաստակաբեկ և խոնջ, նեղու-
թեամբ և տուայտանօք շինեաց և նորոգեաց զվանօրայս և
զեկեղեցիս Հայոց յԵրուսաղէմ և 'ի սահմանս նորա, բազ-
մացոյց 'ի նոսա զկրօնաւորս զարդարեալս առաքինական
վարուք, 'ի պաշտօն փառաբանութեան Աստուծոյ, ըստ
կանոնի Ս. Հարց՝ ժողովեաց զբազում Ս. Գիրս, և տայր
գրել, որոց յաջողակ էին 'ի գրչութեան. տեսեալ ժողո-
վըրդոց զբարեկրօն վարս և զցանկալի բարեկարգութիւնս
նորին, զուարթանային 'ի տուրս և չխնայէին ինչ 'ի նմա-
նէ, որ և 'ի սոյն ամի՝ ասէ, յիշատակարանն, ետուն 'ի
ձեռս նորա Գ բուն սակաւ Աստուածաշունչս: Եւ 'ի բերոց
այգեաց՝ զորս գնեաց, մխիթարէր զմիաբանս և զուխտա-
ւորս, ժիր և արթուն 'ի հոգևոր պաշտամունս՝ հաւասար ընդ
միաբանս, սակաւապէտ և անպաճոյճ, հետևոտս շրջելով
յամենայն տեղիս. ունէր ընդ իւր խորհրդակից և աջակից
'ի գործս զՄոկացի Կարապետ վարդապետ՝ այր առաքինի
և սրբասէր վարուք, և շրջէր յամենայն քաղաքս և 'ի գեօ-
ղըս Հայոց՝ և լուսաւոր վարդապետութեամբ մխիթարէր
զհաւատացեալս, և զնուէրս նոցա առաքէր յԵրուսաղէմ
'ի ձեռս աշակերտաց իւրոց, և երբեմն ինքն տանէր: Այս-
պիսի առաքինական բարեգործութեամբ զարդարեալ վաս-
տակաւոր մշակն եւ արթուն հովիւն հոգևոր բանաւոր